

պուժը ըրաւ առաջնորդ եկեղեցականին, երիտասարդ ու վառվռուն արմաշական, որ, ամէն բանի մէջ իր անձին մուտքը հարկադրած, ճանչցաւ բանուորի տարագին տակ խորհրդաւոր հերետիկոսը: Անոնք հասկցան իրար: Արմաշականը տաքարիւն, ինչպէս տաք գլուխ: Խառնուածքի հանգիստութեամբ մը անոր մէջ կը հաստատէ՞ր արդեօք մեծ հերձուածողը, իր կուսակցութեան դէմ, ինչպէս պիտի ընէր ինք ալ, օր մը, մօտ այդ թուականէն քառորդ դար ետքը, դէմ ելլելով զինքը իր նուիրապետութեան բարձր աստիճաններուն հասցուցած կազմակերպութեան, Հայաստանեայց Եկեղեցիին դէմ: Արմաշականը անոր ընծայեց անվերապահ ասպնջականութիւն: Բռնակալութեան ամէնէն խիստ օրերուն, պատասխանատու դիրքերու վրայ, ան ու նմանները մեծահոգի բան մը կ'ընէին անշուշտ իրենց հօտին անդորրութիւնը առանց խանգարելու, մարդկային իրենց պարտականութիւնները կատարելով այսպէս վտանգուած խլեակներու դէմ: Ի լրումն բարոյութեան, եկեղեցականը չսպառնաց անոր մօրուքին ու պատասպարեց զինքը:

Գաւառներուն մէջ հայ եկեղեցիին պետերը կամացկամաց անցած էին կարգը պետական անձնաւորութեանց: Կառավարութիւնը կը հովանաւորէր զանոնք ու կուսակալները հաճոյք կը զգային այդ հմուտ, յաճախ վարչական որոշ տուրքերով մարդոց ընկերակցութենէն:

Դարձեալ էջեր են հարկաւոր՝ տալու համար Մաթիկին հող անցուցած կենցաղը, գէթ իր գլխաւոր գիծերով: Կ'անցնիմ:

Կովարած Ակոյի քարայրին մէջ հեռաւոր եկեղեցականին դէմքը կարկառուն գեղեցկութիւն մըն էր, տաճկահայերը արհամարհելու վարժ իր բառերուն մէջ տեսակ մը զարտուղութեամբ: Կը հաւնէր խօսելու ձիրքը, մարդիկը վարելու ճարտար կերպերը, ազգային գիտակցութիւնը իր հօտին մէջ արթնցնելու ապահով մեթոտները: Չէր հաւնած անոր գրականութիւնը, ընդհանուր իր արհամարհանքին մէջ, զոր կը կրէր բոլոր գիրքի ասպետ-